

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ
ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ (ԱՃԹՆ) 2019Թ.
ԶԵԿՈՒՅՑ

REPUBLIC OF ARMENIA EXTRACTIVE
INDUSTRIES TRANSPARENCY INITIATIVE
(EITI) REPORT 2019

ՍԵՂՄԱԳԻՐ

SUMMARY REPORT

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ
ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ
(ԱՃԹՆ) 2019Թ.
ԶԵԿՈՒՅՑԻ ՍԵՂՄԱԳԻՐ**

Հրատարակվել է 2021թ. հունիսին

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) բնական պաշարների բաց և հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ է:

ԱՃԹՆ-ի շրջանակներում որոշումներ ընդունող հիմնական մարմինը կառավարության, ընդերքօգտագործող ընկերությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից կազմված բազմաշահառու խումբն է (ԲՇԽ):

ԱՃԹՆ գործընթացը Հայաստանում

- 2016թ.** Եղյեմբեր, ՀՀ բազմաշահառու խմբի կազմավորում՝ ՀՀ վարչապետի 24.11.2016 թ. N 1104-Ա որոշմամբ
- 2016թ.** Դեկտեմբեր, ՀՀ ԱՃԹՆ թեկնածության հայտի կազմում
- 2017թ.** Մարտ, ՀՀ ԱՃԹՆ անդամակցության հաստատում
- 2018թ.** Դեկտեմբեր, ՀՀ ԱՃԹՆ առաջին ազգային զեկույցի հրապարակում
- 2020թ.** ՀՀ ԱՃԹՆ առաջին վավերացում: Ամենաբարձր գնահատականի՝ բավարարող առաջընթաց ունեցող երկրի կարգավիճակի շնորհում
- 2020թ.** Փետրվար, իրական սեփականատերերի բացահայտում
- 2020թ.** Սեպտեմբեր, ՀՀ ԱՃԹՆ երկրորդ ազգային զեկույցի հրապարակում
- 2021թ.** Փետրվար, իրական սեփականատերերի հայտարարագրման էլեկտրոնային համակարգի գործարկում
- 2021թ.** Հունիս, իրական սեփականատերերի պահանջի վավերացում և բավարարող առաջընթաց ունեցող երկրի ամենաբարձր գնահատականի շնորհում

ՀԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐՆ ՈՒ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***Զեկույցի շրջանակներում հաշվետու տարվա համար (2019 թ.) համադրված եկամտային հոսքերը.**



Ռոյալթի



Եկամտային հարկ



Շահութահարկ



Ավելացված արժեքի հարկ



Ոչ ռեզիդենտի շահութահարկ



Մաքսատուրք, մաքսավճար

**Համաձայն ԲՇԽ-ի 2020թ. հունիսի 3-ին հաստատված որոշման՝ էական են համարվում և պետք է համադրվեն այն եկամտային հոսքերը, որոնց մասնաբաժինն արդյունահանվող ճյուղերից ստացվող եկամտային ընդհանուր հոսքերում կազմում է 1% և ավելի*

****Զեկույցի շրջանակներում հաշվետու տարվա համար համադրված ընդերքօգտագործող ընկերությունները.**



«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ



«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ



«Զաարատ Կապան» ՓԲԸ



«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ



«Թեղուտ» ՓԲԸ



«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ



«Լիդիան Արմենիա» ՓԲԸ



«Մեղրածոր Գոլդ» ՍՊԸ



«Լեռ-Էքս» ՍՊԸ

***Բազմաշահառու խմբի 2020թ. հունիսի 3-ի որոշմամբ՝ 2019թ. ֆինանսական տարվա համար համադրվող են համարվում այն ընկերությունները, որոնք հաշվետու ֆինանսական տարում ՀՀ պետական բյուջե են վճարել 150 միլիոն դրամին համարժեք կամ դրան գերազանցող գումարից բարձր հարկեր և վճարումներ*


ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿԸ

Օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն ստացված իրավաբանական անձանց ցանկ 2019թ. դրությամբ

Ընկերության անվանումը	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը
«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-232,2012թ. նոյեմբերի 27
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-189,2012թ. հոկտեմբերի 20
«Զաարատ Կապան» ՓԲԸ	Թիվ ՊՎ-183,2012թ. նոյեմբերի 27
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-311,2013թ. ապրիլի 5
«Թեղուտ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-376,2013թ. փետրվարի 20
«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-103,2012թ. հոկտեմբերի 20
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Թիվ ՊՎ-245,2012թ. սեպտեմբերի 26
«Մեղրածոր Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-057,2012թ. օգոստոսի 22
«Լեռ-Էքս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-094,2012թ. օգոստոսի 16
«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Թիվ ՊՎ-213,2012թ. հոկտեմբերի 20
«Ասսաթ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-366,2013թ. հունիսի 6
«ԱՏ-Մետալս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-514,2015թ. հունվարի 16
«Լիճքվազ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-293,2012թ. նոյեմբերի 22
«Սազամար» ՓԲԸ	Թիվ ՊՎ-093,2012թ. հոկտեմբերի 20
«Թաթսթոուն» ՍՊԸ	Թիվ ՊՎ-459,2013թ. փետրվարի 11
«Գեոլի Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-544,2016թ. հուլիսի 22
«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	Թիվ 089,2012թ. հունիսի 12
«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-174,2012թ. նոյեմբերի 7
«Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ	Թիվ ՊՎ-239,2012թ. սեպտեմբերի 27
«Վայք Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-371,2012թ. նոյեմբերի 30
«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ	Թիվ ՊՎ-398,2013թ. մարտի 7
«Ղարագույաններ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-547,2016թ. հոկտեմբերի 25
«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-425,2012թ. դեկտեմբերի 28
«Բակտեկ Էլո» ՍՊԸ	Թիվ ՊՎ-515,2014թ. օգոստոսի 22
«Ֆորջն Ռիզորսիս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-169,2012թ. հոկտեմբերի 20
«Մեգո գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-184,2012թ. դեկտեմբերի 28


ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ

Երկրաբանական աշխատանքների ծավալը և դիտարկվող ժամանակաշրջանների տարեկան միջին աճի տեմպերը, 2010-2019թթ., միլիոն ՀՀ դրամ



Աղբյուրը. ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ armstat.am
Երկրաբանական ուսումնասիրություններ՝ https://armstat.am/file/article/eco_book_2019_3.pdf


Մետաղական հանքաքարի հաստատված քանակն ըստ մարզերի, 2010-2019թթ., հազար տոննա



Աղբյուրը. ՏԿԵՆ-ի կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված տեղեկատվություն


ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ

Հանքարդյունաբերության ոլորտի տարածքային արտադրանքի ծավալները դրամական արտահայտությամբ, 2014-2019թթ., միլիոն ՀՀ դրամ



Աղբյուրը. ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով» հրապարակումը համապատասխան տարիների համար

Մետաղական օգտակար հանածոների հաստատված պաշարներն ըստ մարզերի, 2010-2019թթ., հազար տոննա



Աղբյուրը. ՏԿԵՆ-ի կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված տեղեկատվություն

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ


Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտադրած հիմնական արտադրատեսակները, դրանց ծավալը և արժեքը ըստ ընդերքօգտագործող ընկերությունների, 2019թ.

	Ընկերություն	Արտադրատեսակ	Չափի միավոր	Ծավալ	Արժեք (մլն դրամ)
1	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Պղնձի խտանյութ	թմտ	38,345	14,524
2	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Մոլիբդենի խտանյութ	թմտ	824	2,919
3	«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Պղնձի խտանյութ	թմտ	14,030	4,612
4	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Ոսկի, արծաթ պարունակող դորե ձուլակտորներ	գրամ	4,815,679	52,731
5	«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Ֆեռոմոլիբդեն	տոննա	8,811	48,103
6	«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Պղնձի խտանյութ	թմտ	330,802	79,709
7	«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Մոլիբդենի խտանյութ	թմտ	498	1,116
8	«Թեղուտ» ՓԲԸ	Պղնձի խտանյութ	թմտ	53,065	17,340
9	«Թեղուտ» ՓԲԸ	Մոլիբդենի խտանյութ	թմտ	737	1,675
10	«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տոննա	3,274	1,681
11	«Չաարատ Կապան» ՓԲԸ	Պղնձի խտանյութ	տոննա	9,471	26,103
12	«Չաարատ Կապան» ՓԲԸ	Ցինկի խտանյութ	տոննա	11,239	7,579
Ընդամենը					258,090

Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ


ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտադրած հիմնական արտադրատեսակները և դրանց մասնաբաժինը, 2019թ.



Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

2014-2019թթ. մետաղական արտադրատեսակների արտահանումը բնեղեն արտահայտությամբ, տոննա



Աղբյուրը. ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրություն







ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ

Պղնձի խտանյութի արտադրությունն ըստ ընդերքօգտագործող ընկերությունների, 2019թ.

Ընկերություն	Մարզ	Ծավալը, թմտ	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Սյունիք	38,345	14,524
«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Լոռի	14,030	4,612
«Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Սյունիք	330,802	79,709
«Թեղուտ» ՓԲԸ	Լոռի	53,065	17,340
«Չաարատ Կապան» ՓԲԸ	Սյունիք	10,578	26,103
Ընդամենը		446,820	142,288

Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

Պղնձի խտանյութի արտահանման բաշխումն ըստ ընդերքօգտագործող ընկերությունների և արտահանման հիմնական ուղղությունների, 2019թ.

Ընկերությունը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար
Սյունիք «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ «Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ «Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ «Չաարատ Կապան» ՓԲԸ	 Չինաստան	38,791 (թմտ)	18,281	38,067
	 Չինաստան	118,328 (տոննա)	57,012	118,715
	 Բուլղարիա	212,644 (թմտ)	102,455	213,341
	 Կանադա	11,494 (տոննա)	28,077	58,464
Լոռի «Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ «Թեղուտ» ՓԲԸ	 Բուլղարիա	13,948 (թմտ)	6,008	12,509
	 Շվեյցարիա	48,522 (թմտ)	25,527	53,154
	Ընդամենը	443,727	237,358	494,251

Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ




ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ

Մոլիբդենի խտանյութի և ֆեռոմոլիբդենի արտադրությունն ըստ ընդերքօգտագործող ընկերությունների, 2019թ.

Ընկերություն	Մարզ	Ծավալը, թմտ	Արժեքը, մլն ՀՀ դրամ
Մոլիբդենի խտանյութ			
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Սյունիք	824	2,919
«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Սյունիք	498	1,116
«Թեղուտ» ՓԲԸ	Լոռի	737	1,675
Ընդամենը		2,059	5,709
ֆեռոմոլիբդեն			
«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Սյունիք	8,811	48,103
Ընդամենը		8,811	48,103

Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

Մոլիբդենի խտանյութի և ֆեռոմոլիբդենի արտահանման բաշխումն ըստ ընդերքօգտագործող ընկերությունների և արտահանման ուղղությունների, 2019թ.

Արտադրատեսակը	Մարզը	Ընկերությունը	Արտահանման երկիրը	Ծավալը, թմտ	Արժեքը, մլն դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար
Մոլիբդենի խտանյութ	Սյունիք	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	 Եվրոպական միության երկրներ	779	3,559	7,411
		«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	 Չինաստան	441	1,293	2,693
	Լոռի	«Թեղուտ» ՓԲԸ	 Շվեյցարիա	811	3,272	6,813
Ֆեռոմոլիբդեն	Սյունիք	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	 Սիդեռլանդներ, Ռուսաստանի Դաշնություն	8,850	68,290	142,200

Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ


ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ

Ցինկի խտանյութի արտադրությունն ըստ ընդերքօգտագործող ընկերությունների, 2019թ.

Ընկերություն	Մարզ	Ծավալը, թմտ	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«Չաարատ Կապան» ՓԲԸ	Սյունիք	12,446	7,579

Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

Ցինկի խտանյութի արտահանման վերաբերյալ տվյալները, 2019թ.

Մարզ	Ընկերությունը	Արտահանման երկրները	Ծավալը, թմտ	Արժեքը, մլն դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար
Սյունիք	«Չաարատ Կապան» ՓԲԸ	 Բելգիա	12,158	7,924	16,500

Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ

Ոսկու արտադրությունն ըստ ընդերքօգտագործող ընկերությունների, 2019թ.

Ընկերությունը	Մարզ	Արտադրատեսակը	Ծավալը, տոննա	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Գեղարքունիք	Ոսկի, արծաթ պարունակող դորե ձուլակտորներ	4.8	52,731
«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	Կոտայք	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	3,274	1,681

Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

Ոսկու համաձուլվածքի և ոսկու պարունակությամբ մետաղի խտանյութի արտահանման բաշխումն ըստ ընդերքօգտագործող ընկերությունների և արտահանման հիմնական ուղղությունների, 2019թ.

Ընկերությունը	Մարզ	Արտադրատեսակ	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն դրամ	Արժեքը, հազ. ԱՄՆ դոլար
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Գեղարքունիք	Ոսկի, արծաթ պարունակող դորե ձուլակտորներ	 Շվեյցարիա	5,417 կգ	103,685	215,903
«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	Կոտայք	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	 Շվեյցարիա	3,108,000 կգ	1,599	3,329

Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ


Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութի ներքին իրացման բաշխումն ըստ ընդերքօգտագործող ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և գնորդ կազմակերպությունների 2019թ.

Ընկերություն	«ԱՏ-Մետալս» ՍՊԸ	«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ
Ծավալը, թմտ	9,203	166
Արժեքը, մլն դրամ	294	82
Գնորդ կազմակերպություն	«Չաարատ Կապան» ՓԲԸ	«Ասկե գրուպ» ԲԲԸ

Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ


Հանքագործական արդյունաբերության մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ում, 2014–2019թթ



Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության ՎԿ-ի «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» համապատասխան տարիների համար


ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ընդերքօգտագործող ընկերություններում զբաղվածության կառուցվածքը 2019թ.



Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ


Ընդերքօգտագործող ընկերություններում զբաղվածների տոկոսային տեղաբաշխումը՝ ըստ մարզերի և մայրաքաղաքի, 2019թ.




Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետությունը վճարված հարկերի մասնաբաժինը պետությունից եկամուտներում, 2019թ.




Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, միլիոն ՀՀ դրամ, 2019թ.



Աղբյուրը՝ ՊԵԿ-ի և ՇՄՆ-ի ԱՃԹՆ-ի շրջանակում ներկայացված հաշվետվություններ


ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, միլիոն ՀՀ դրամ, 2019թ.



Աղբյուրը. ԱՃԹՆ-ի շրջանակում պետական մարմինների կողմից ներկայացված հաշվետվություններ

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները՝ ըստ հոսքերի կառուցվածքի, միլիոն ՀՀ դրամ, 2019թ.




Աղբյուրը. ՏԿԵՆ-ի կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված տեղեկատվություն

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Համայնքների բյուջեների եկամուտները ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերից և վճարներից՝ ըստ առաջատար համայնքների, միլիոն ՀՀ դրամ, 2019թ.

Ընդամենը՝ 1,019 միլիոն ՀՀ դրամ




Այլ համայնքներ՝ 39 միլիոն ՀՀ դրամ

Աղբյուրը. ՏԿԵՆ-ի կողմից ԱԾԹՆ-ին տրամադրված տեղեկատվություն

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ


2019թ. խոշոր ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները (միլիոն ՀՀ դրամ)



Աղբյուրը. ՏԿԵՆ-ի կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված տեղեկատվություն


ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը ըստ ընկերությունների հաշվետվությունների, ՀՀ դրամ, 2019թ.



Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից սոցիալ-տնտեսական ոլորտում ստանձնած պարտավորությունները և համայնքին իրականացված բարեգործական հատկացումները՝ դրամական արտահայտությամբ, միլիոն ՀՀ դրամ, 2019թ.



Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ


ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հիմնադրամներին, ՀԿ-ներին և ֆիզիկական անձանց տրամադրած նվիրատվությունները, միլիոն ՀՀ դրամ, 2019թ.



Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հիմնադրամներին իրականացված նվիրատվությունները, միլիոն ՀՀ դրամ, 2019թ.



Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ


ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հասարակական կազմակերպությունների օգտին իրականացված նվիրատվությունները, միլիոն ՀՀ դրամ, 2019թ.



Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ֆիզիկական անձանց օգտին իրականացված նվիրատվությունները, միլիոն ՀՀ դրամ, 2019թ.




Աղբյուրը. Ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ին տրամադրված հաշվետվություններ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ


«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքներին պետական բյուջեով հատկացված գումարները, միլիոն ՀՀ դրամ, 2019թ.

Ընդամենը՝ 144 միլիոն ՀՀ դրամ




Աղբյուրը. Տեղեկատվությունը հրապարակված է Ֆինանսների նախարարության կայքում

Պետական մարմինների և ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ներկայացված հաշվետվությունների համադրման արդյունքներ (նախնական), միլիոն ՀՀ դրամ



Պետական մարմինների և ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ներկայացված հաշվետվությունների համադրման արդյունքներ (վերջնական), միլիոն ՀՀ դրամ



Աղբյուրը. Համաձայն ԱՀԹՆ-ին տրամադրված տեղեկատվություն



1. Քանի երկիր է անդամակցում ԱՃԹՆ-ին

2021թ. հուլիսի 1-ի դրությամբ ԱՃԹՆ-ին անդամակցում է 55 երկիր:



2. Երբվանի՞ց է Հայաստանը անդամակցում ԱՃԹՆ-ին

Հայաստանը ԱՃԹՆ-ին անդամակցում է 2017թ. մարտի 9-ից:



3. Որն է ԱՃԹՆ-ի իրականացման առանցքային նպատակը

ԱՃԹՆ-ի հիմնական նպատակն է արդյունահանող ոլորտի լավ կառավարման խթանումը թափանցիկության և հաշվետվողականության ապահովման միջոցով:



4. Որո՞նք են Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019-2020թթ. աշխատանքային ծրագրում սահմանված ԱՃԹՆ-ի ներդրման 5 նպատակները

1. Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում,
2. Հաշվետվողականության և հանրային վերահսկողության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում,
3. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնում, ՀՀ իրավական դաշտի ուսումնասիրություն իրավական անհամապատասխանությունների և բացերի բացահայտման նպատակով,
4. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրում համաձայն ճանապարհային քարտեզի՝ հաշվի առնելով լավագույն միջազգային փորձը,
5. ԱՃԹՆ ԲԾԽ-ի և շահագրգիռ մարմինների կարողությունների հզորացում, ԱՃԹՆ-ի մեյնսթրիմինգ, տվյալների համակարգային բացահայտման խրախուսում:



5. Ի՞նչ է ԱՃԹՆ ստանդարտը

ԱՃԹՆ-ի ստանդարտը արդյունահանող ճյուղերի թափանցիկությունը, հաշվետվողականությունը և մասնակցային կառավարումը խթանող պահանջներ են, որոնք իրականացնում են ԱՃԹՆ-ի անդամակից երկրները:



6. Արդյո՞ք ստուգվում է ԱՃԹՆ անդամ երկրների՝ ԱՃԹՆ ստանդարտների պահանջներին համապատասխանությունը

Այո, համաձայն ԱՃԹՆ-ի կանոնների՝ անդամակցող յուրաքանչյուր երկիր, ԱՃԹՆ-ի թեկնածու դառնալուց հետո երկուսուկես տարվա ընթացքում և երեք տարին մեկ անգամ, պետք է անցնի վավերացում:



7. Ինչպե՞ս է գնահատվում Հայաստանի առաջընթացը ԱՃԹՆ-ի ներդրման գործում

Հայաստանի առաջընթացը գնահատվել է բարձր՝ Հայաստանը ԱՃԹՆ-ի անդամ 55 երկրներից 9-րդն է, որին ԱՃԹՆ-ի միջազգային խորհուրդը շնորհել է «բավարարող առաջընթաց» գնահատականը:



8. Որտե՞ղ են հասանելի ԱՃԹՆ-ի ազգային զեկույցները

ԱՃԹՆ-ի զեկույցները, ինչպես նաև այլ բացահայտվող տեղեկություններ հասանելի են Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում, հետևյալ հղմամբ <https://www.eiti.am/hy/>:



9. Արդյո՞ք ԱՃԹՆ-ի զեկույցում ներկայացված թվային տվյալները հաստատվում են անկախ, ատոլիտորական ընկերության կողմից՝ համաձայն Աուդիտի Միջազգային Ստանդարտների

Զեկույցում ներկայացված թվային տվյալները չեն ենթարկվում անկախ ատոլիտի, վճարված հարկերի և վճարների վերաբերյալ տվյալների հավաստիությունը երաշխավորվում է հաշվետու ընկերությունների և պետական մարմինների ղեկավարների, ինչպես նաև ընկերությունների գլխավոր հաշվապահների ստորագրությամբ:



10. Քանի՞ մետաղական հանքավայր կա ՀՀ-ում 2019թ. վերջի դրությամբ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հանրապետական երկրաբանական ֆոնդի կողմից վարվող օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների պետական կադաստրում հաշվառված է 43 մետաղական հանքավայր:



11. Որո՞նք են Հայաստանում արդյունահանվող հիմնական մետաղները

Հայաստանում արդյունահանվող հիմնական մետաղներն են պղինձը, մոլիբդենը, ոսկին և ցինկը:



12. Ի՞նչ ծավալի երկրաբանական ուսումնասիրություններ են կատարվել վերջին 10 տարիների ընթացքում

2010-2019 թթ. ընթացքում երկրաբանական աշխատանքների ծավալը կազմել է 4,724 մլն ՀՀ դրամ, որի 28%-ը և 22%-ը բաժին են հասնում 2014թ. և 2018թ. համապատասխանաբար: 2019թ. երկրաբանական աշխատանքների ծավալները կազմել են 318 մլն ՀՀ դրամ:



13. Ո՞ր բնագավառներում են հիմնականում իրականացվում երկրաբանական ուսումնասիրությունները

2019թ. ընթացքում ամենամեծ ծավալներով երկրաբանական ուսումնասիրությունները տեղի են ունեցել ազնիվ մետաղների և տարածաշրջանային երկրաբանական, երկրաֆիզիկական, հիդրոերկրաբանական աշխատանքների բնագավառներում՝ համապատասխանաբար 139.5 մլն և 145.6 մլն ՀՀ դրամի չափով:



14. Ի՞նչ է նշանակում «իրական սեփականատեր» ըստ ԱՃԹՆ ստանդարտի սահմանման

Ընկերության իրական սեփականատերն այն ֆիզիկական անձն է, ում փաստացի ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում կամ ում հսկողության ներքո է գտնվում տվյալ իրավաբանական անձը:



15. Ի՞նչ լրացուցիչ թույլտվություններ է պահանջվում ստանալ ընդերքօգտագործման իրավունք տրամադրելուց հետո

Ընդերքօգտագործման իրավունքը օգտակար հանածոյի արդյունահանման կամ այդ նպատակով երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու իրավունք է, որը կազմված է չորս փաստաթղթերից՝ փորձաքննություններ անցած նախագիծ կամ ծրագիր, լեռնահատկացման ակտ, ընդերքօգտագործման թույլտվություն և ընդերքօգտագործման պայմանագիր: Այնուհանդերձ, այդ իրավունքի ստացումից հետո ընդերքօգտագործող պարտավոր է ստանալ նաև ջրօգտագործման և այլ թույլտվություններ, կարգավորել հողի ձեռք բերման հետ կապված հարցերը, որոնց դրական լուծումը ընդերքօգտագործման իրավունքը ստանալու փաստի ուժով ինքնին չի կարող լուծված համարվել:



16. Արդյո՞ք ընդերքօգտագործման իրավունքը կարող է փոխանցվել այլ տնտեսվարողի

Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումն իրականացվում է լիազոր մարմնի համաձայնությամբ, որը տրվում է, եթե ապահովվում են << ընդերքի մասին օրենսգրքով սահմանված պայմանները:



17. Ի՞նչ է ռեկուլտիվացիան

Հայաստանի օրենսդրության համատեքստում, ռեկուլտիվացիան ընդերքօգտագործման աշխատանքների իրականացումից հետո իրականացվող միջոցառումներ են, որոնք ուղղված են ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանը (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելուն):



18. Ինչո՞վ է ընդերքօգտագործման պայմանագիրը տարբերվում ընդերքօգտագործման թույլտվությունից

Ընդերքօգտագործման թույլտվությունը վարչական ակտ է, որն ընդերքօգտագործողին է տրամադրվում օգտակար հանածոների ոլորտը կառավարող պետական լիազոր մարմնի կողմից և պարունակում է հիմնականում տեխնիկական բնույթի տվյալներ օգտակար հանածոյի պաշարների, դրանց տեղադիրքի, արդյունահանման ծավալների և ժամկետների վերաբերյալ: Ընդերքօգտագործման պայմանագիրը նույն լիազոր մարմնի և ընդերքօգտագործողի միջև կնքված գրավոր համաձայնություն է, որով սահմանվում են տվյալ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պայմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները:



19. Ի՞նչ է նշանակում տվյալների համակարգված բացահայտում

Տվյալների համակարգված բացահայտումը պետական մարմինների և ընկերությունների տեղեկատվական համակարգերում ստանդարտով պահանջվող տվյալների կանոնավոր հրապարակումներն են:



20. Որո՞նք են եղել 2019 թվականի ընթացքում մետաղական հանքաքարերի արդյունահանման ՀՀ առաջատար երեք մարզերը

2019թ. ընթացքում ամենաշատ մետաղական հանքաքարեր արդյունահանվել են Սյունիքի մարզում՝ ամբողջ արդյունահանման 82.3%: Սյունիքին հաջորդում են Լոռու և Գեղարքունիքի մարզերը՝ համապատասխանաբար 10.3% և 6.8% մասնաբաժիններով:



21. Որքա՞ն են կազմել մետաղական հանքաքարի արդյունահանման և հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի ծավալները 2019 թվականին

2019թ. մետաղական հանքաքարի արդյունահանման ծավալը կազմել է 342,655 մլն ՀՀ դրամ՝ գրանցելով 25.5% աճ նախորդ տարվա նկատմամբ: Նույն տարում հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի արժեքը կազմել է 356,781 մլն ՀՀ դրամ և գրանցել 24.6% աճ՝ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ:



22. Ի՞նչ ծավալի է եղել մետաղական հանքաքարերի և խտանյութի ներքին իրացումը 2019 թվականին

Ներքին իրացումը 2019թ. կազմել է 757 մլն ՀՀ դրամ կամ 1.57 մլն ԱՄՆ դոլար, որը պակաս է նախորդ տարվա արդյունքից շուրջ 7 անգամ և կազմում է մետաղական հանքաքարերի արդյունահանման ոլորտի թողարկած արտադրանքի ծավալի 0.2%-ը:



23. Ինչպիսի՞ դեր է ունեցել մետաղական հանքարդյունաբերության արտահանումը ՀՀ արտահանման մեջ 2019 թվականին

2019թ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը ՀՀ ընդհանուր արտահանման մեջ կազմել է 39.3% (1,031 մլն ԱՄՆ դոլար): Դրանից 23.9%-ը բաժին է հասել պղնձի խտանյութին, 8.5%-ը՝ ոսկուն, 5.4%-ը՝ ֆեռոնոլիբդենին, 0.7%-ը՝ մոլիբդենի խտանյութին, 0.6%-ը՝ ցինկի խտանյութին և 0.1%-ը՝ թանկարժեք մետաղների խտանյութին:



24. Որո՞նք են արտահանվող հիմնական մետաղական արտադրատեսակները 2019 թվականին

2019թ. մետաղական արտադրատեսակների արտահանման մեջ կեսից ավելին կազմել է պղնձի խտանյութի արտահանումը (626.7 մլն ԱՄՆ դոլար): Նշանակալի մասնաբաժին են ունեցել նաև ոսկու և ֆեռոնոլիբդենի արտահանումները՝ կազմելով համապատասխանաբար 142.4 մլն և 223.9 մլն ԱՄՆ դոլար:



25. Ի՞նչ դեր ունի մետաղական հանքարդյունաբերության ոլորտը ՀՀ տնտեսության մեջ 2019 թվականին

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տեղեկատվության՝ 2019թ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը երկրի ՀՆԱ-ում կազմել է 2.8%՝ 184.23 մլրդ ՀՀ դրամ արժեքով: 2019թ. նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ հանքարդյունաբերության ոլորտի աճը կազմել է 8.5%:

26. Որքա՞ն են կազմել ընկերությունների կողմից պետությանը վճարած հարկերի և վճարների ծավալները 2019 թվականին

2019թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարման ենթակա հաշվարկված հարկերը և վճարները նախորդ տարվա նկատմամբ աճել են 8.3%-ով՝ կազմելով 84,996 մլն ՀՀ դրամ, ինչը կազմել է 2019թ. ընդհանուր պետբյուջեի եկամուտների 5.4%-ը:

27. Ո՞րն է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից 2019 թվականի ընթացքում վճարված ամենամեծ հարկատեսակը

2019թ. ընթացքում վճարված ամենամեծ հարկատեսակը ողյալթին է:

28. Ինչ մասնաբաժին ունի պետությունը ոլորտի ընկերություններում

Հայաստանի Հանրապետությունում պետությունը չունի մասնաբաժին հանքարդյունաբերության ոլորտի ընկերություններում:

29. Ի՞նչ ծավալի են եղել ընկերությունների կողմից իրականացված սոցիալ-տնտեսական պայմանագրային պարտավորությունները 2019 թվականին

2019 թ. ընկերությունների կողմից կատարվել է 19.3 միլիոն դրամի վճարում՝ որպես պայմանագրային պարտավորության կատարում:

30. Կա արդյո՞ք արտիզանային և փոքրամասշտաբ արդյունահանում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում

Հաշվի առնելով ոլորտի մասշտաբը, օրենսդրական կարգավորումները, վերահսկողությունը և հաշվետվողականության պահանջները՝ ակնկալվում է, որ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ոչ ֆորմալ գործունեություն չկա:

31. Ի՞նչ է շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխը

Այն կենտրոնական գանձապետարանում բացված արտաբյուջետային հաշվին կուտակվող և ընդերքօգտագործողների կողմից հատկացվող գումարներ են, որոնք ուղղվում են ընդերքօգտագործման ընթացքում խախտված հողերի վերականգնմանը:

32. Ի՞նչ է մշտադիտարկումների իրականացման վճարը

Այն օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար ընդերքօգտագործողի կողմից հատկացվող վճար է: Մշտադիտարկումների կառուցվածքն ու բովանդակությունը, դիտակետերի տեղադրումը և մշտադիտարկումների հաճախականությունն ամրագրվում է հանքի փակման ծրագրում:



33. Ի՞նչ դեր ունի հանքարդյունաբերության ոլորտը ՀՀ տնտեսության մեջ զբաղվածության տեսանկյունից

Արդյունաբերությունը զբաղվածության ցուցանիշներով Հայաստանի տնտեսության մեջ երրորդն ճյուղն է: Ըստ ՀՀ ՎԿ-ի 2019թ. ոլորտում զբաղվածների թիվը կազմել է 149 հազար մարդ: Նույն տարում հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինն ընդհանուր արդյունաբերության զբաղվածության մեջ կազմել է 5.8%, իսկ զբաղվածների ընդհանուր թիվը՝ 8.7 հազար:



34. Ինչքա՞ն է Հայաստանի մետաղական հանքարդյունահանման ոլորտում զբաղված օտարերկրացիների թիվը

2019թ. մետաղական հանքարդյունահանման ոլորտում զբաղվածների ավելի քան 98%-ը եղել է ՀՀ քաղաքացի: Այդ տարում օտարերկրյա քաղաքացիների թիվը կազմել է 186:



35. Նախատեսվա՞ծ են արդյոք ֆինանսական երաշխիքներ, որոնք հանքի փակումից հետո ապահովում են շրջակա միջավայրի վերականգնումը

Օրենսդրությամբ սահմանված են մի քանի մեխանիզմներ, որոնք միտված են ապահովելու ֆինանսական երաշխիքներ խախտված հողերի ռեկուլտիվացման և հետագա մշտադիտարկումների իրականացման համար:



36. Ինչպե՞ս են մետաղական օգտակար հանածոներ արդյունահանող ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանումներ կատարվում ազդակիր համայնքներին

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն, մասհանումները կատարվում են առանձին տողով և արտացոլվում այն համայնքի բյուջեում, որի տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն: Մասհանումների չափերը որոշվում են՝ ելնելով համապատասխան ընկերությունների կողմից առաջիկա բյուջետային տարվան նախորդող երկրորդ, երրորդ և չորրորդ տարիների արդյունքներով պետական բյուջե փաստացի վճարված բնապահպանական հարկի հանրագումարից՝ օրենքով սահմանված որոշակի չափորոշիչների հիման վրա:



37. Ընդհանուր առմամբ 2019 թվականի ընթացքում քանի՞ սոցիալ-տնտեսական ծրագիր է իրականացվել ոլորտի կազմակերպությունների կողմից

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ներկայացված հաշվետվությունների համաձայն՝ 2019թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ազդակիր համայնքներում իրականացվել են շուրջ 50 ծրագրեր՝ որպես պայմանագրային պարտավորությունների իրականացում և բարեգործություն:



38. 2019 թվականի ընթացքում ի՞նչ ծավալի նվիրատվություններ են իրականացվել ընդերքօգտագործող ընկերությունների կողմից և ո՞ւմ են դրանք ուղղված եղել

2019թ. ընթացքում ընդերքօգտագործողները կատարել են նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումներ հիմնադրամներին, ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց: Այդ տարում դրանք կազմել են 5.28 մլրդ ՀՀ դրամ: Հիմնադրամներին իրականացված նվիրատվությունների ընդհանուր գումարը կազմել է 4.23 մլրդ ՀՀ դրամ (ընդհանուր նվիրատվությունների շուրջ 80%-ը), հասարակական կազմակերպություններին իրականացված նվիրատվությունները՝ 607 մլն ՀՀ դրամ, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ 105 մլն ՀՀ դրամ, այլ կազմակերպություններին՝ 193 մլն ՀՀ դրամ և ֆիզիկական անձանց՝ 146 մլն ՀՀ դրամ:



39. Համադրման արդյունքում հայտնաբերված ո՞ր չափի սխալներն են ենթակա հետաքննման

Համաձայն ԲՇԽ-ի որոշման՝ համադրման նպատակով հետաքննվել են այն 2019թ. ֆինանսական հոսքերի անհամապատասխանությունները, որոնց չափը կազմում է ֆինանսական տվյալի 4%-ը, սակայն ոչ պակաս քան 1 միլիոն ՀՀ դրամը:



40. Ո՞ր ընկերություններն են համարվում հաշվետու ԱՃԹՆ-ի շրջանակում

ՀՀ օրենսդրության համաձայն մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած բոլոր ընդերքօգտագործող ընկերությունները, բացառությամբ սնանկ ճանաչվածների, համարվում են հաշվետու:



**REPUBLIC OF ARMENIA EXTRACTIVE
INDUSTRIES TRANSPARENCY INITIATIVE
(EITI) SUMMARY REPORT 2019**


Published in July 2021

GENERAL INFORMATION

The Extractive Industries Transparency Initiative (EITI) is a global Standard to promote the open and accountable management of natural resources.

In the framework of EITI, the main decision-making body is the Multi-Stakeholder Group (MSG) comprised of the representatives from the government, mining companies and civil society.

The EITI process in Armenia



RECONCILED FINANCIAL STREAMS AND MINING COMPANIES

***Reconciled revenue streams for the reporting period (2019) in the framework of the Report**



Royalty



Income tax



Profit tax



Value added tax



Non resident's profit tax



Customs duties and fees

**According to the decision approved by the MSG on 3 June 2020, the revenue streams which shares in the total revenue streams received from the extractive sectors makes 1% and more are considered material and are subject to reconciliation.*

****Reconciled mining companies in the framework of the Report for the reporting period**



"Zangezur Copper-Molybdenum Combine" CJSC



"Geopromining Gold" LLC



"Chaarat Kapan" CJSC



"Agarak CMC" CJSC



"Teghout" CJSC



